

մի անձնուրաց մարդ կենդանի օրինակ չտար. ծեմարանի տեսուչը ամեն ինչ թողած կրօնաւորի խարազն հագաւ և իւր ետևից Մալք Աթոռի գաւիթ հրաւիրեց իւր ընտրեալ աշակերտներին, առանց թմբուկ զարկելու, լուռ և գործոն ու կենդանի օրինակով. իսկ այդ անձնազոհութիւնը նուիրագործեց հանգ. Հայրապետը այդ նախընծայ կրօնաւորներից երկուսին ուղարկելով արտասահման կատարելագործուելու: Արդի Վեհ. Հայրապետը, որ միշտ հետևող և սիրահար է եղել լուսի և գիտութեան, առաւել բուռն ցանկութեան ապացուց տուաւ իւր լիշեալ կարգադրութեամբ:

Արդ՝ կարող ենք աւետել մեր ընթերցողներին, որ նոցանից Հ. Հ. Ցուսիկ և Կոմիտաս վարդապետներն արգէն մեկնել են արտասահման, Հ. Բենիկ վարդապետն Օդէսա, իսկ Հ. Եզնիկ վարդապետը Մոսկուա՝ տեղական համալսարաններում լսելու համար:

Իսկ ծեմարանի սաներից եօթ հոգի Վեհ. Հայրապետի բարձր հաճութեամբ արդէն ուրար են ստացել և մօտերումս սարկաւագ պիտի ձեռնադրութին:

Այս գեղեցիկ ձեռնարկութեան առաջ ոսկեղէն յուսերով է լցւում խորհող մարդու սիրտը:

† ՅՈՎՀԵՆՆԵՍ ԽԵԶՈՒՄԵԱՆ

Գրականութեան անձնուէր մշակներն այնքան սակաւաթիւ են մեզանում, որ եղածների վերալ ուրախանում ենք, իսկ նոցանից որևէ է մէկի կորուստը դառնապէս ողբում:

Այսօր մենք ողբում ենք մի նորաբոյս և վաղաթառամ գարնան ծաղիկ, մի անձնուրաց հայրենասէր. ողբում ենք մի կորովի կեանքի կորուստ, որ գեղեցիկ ապագալ էր խոստանում մեզ: Դա Լայպցիգի հա-

մալսարանի աստուածաբանութեան ուսանող Յովհաննէս
Խաչումեանցն էր:

Ողբացեալ Յովհաննէսը ընիկ Գանձակեցի էր. նա
իւր ուսումը յաջողութեամբ աւարտելով ս. Եջմիածնի
Հոգեոր ծեմարանում՝ մի քանի տարի ուսուցչական
պաշտօն վարեց Գանձակի հալ հոգեոր դպրոցներում.
այնտեղ նաև մեր մէջ աւերմունք գործող կուսակցական
կոփեներին զոհ գնալով մտածեց բարձր աստուածաբա-
նական ուսումն ստանալ, որպէս զի առաւել պատրաս-
տուած և աւելի արդիւնաշատ ծառայութիւն մատու-
ցանէ ազգին և եկեղեցուն. նորա բաղձանքներին լը-
բումն տուեց յայտնի հարուստ պ. Ա. Ծատուրեանը և
նա շտապեց Գերմանիա, ուր մի երկու տարի ուսանում
էր համալսարանում:

Ալդ միջոցներին էր, որ հարուստ ու աղքատ, ալր
և կին, մեծ ու փոքր, գիտուն ու տգէտ ոգեսորուեցան
մի ընդհանուր տենչով, բոլորի հայեացքներն էլ ուղ-
ղուած էին դէպի մի կողմ. եռում էր և Յ. Խաչումեա-
նը, ընդհանուր գործը քարշեց նորան դէպի ինքը և
ահա տեսնում ենք նորան «ընդ ծով և ընդ ցամաք»
որպէս մի հոետոր վարդապետ, մի իսկական քարողիչ
գաղափարի, որ ամենուրեք և ամենքի ուշադրութիւնը
գարձնում էր դէպի հալութիւն, սորա գրականութիւնը
կրօնը, եկեղեցին և լեզուն:

Հմուտ լինելով անգղիերէն լեզուին՝ մերթ հալ ե-
կեղեցու դատն էր պաշտպանում նա Զիկագօի կրօնա-
կան համաժողովում, միւս կողմից հալոց մասին ինքնու-
բոյն և թարգմանական յօդուածներ զետեղում ամե-
րիկական թերթերի մէջ, բայց որ ամենից գլխաւորն է
ամերիկեան ժողովրդի ջերմ կարեկցութիւնն ու համա-
կրութիւնը գրաւելով դէպի խղճալի հալ ազգը, վերջին-
ներիս յօդուածներով ողողում էր ամերիկեան մամուլը
հալոց մասին:

Աւարտելով այնտեղ իւր առաքելութիւնը և գուցէ
նաև զգալով ալդպիսի աղմկալից կեանքի բացասական
ազդեցութիւնն իւր առողջութեան վերալ, նա վերադառ-
ձաւ Գերմանիա և 1895 թուին նորից մտաւ Լալա-

ցիգի համալսարանը:

Այդ միջոցին էր, 1895 թուի օգոստոսի վերջերին, որ «Լումալի» հրատարակչը բաղտ ունեցաւ ծանօթանալ Լալացիգում Խաչումեանցին, սևաչեայ, գանգրահեր, թխադէմ, բարեձև կազմուածքով, համակրելի տեսքով և միջահասակ մի երիտասարդին, որ ոտքից մինչև գլուխ՝ ոգեսորութիւն էր, եռանդ էր:

Մի ամբողջ շաբաթուայ ընթացքում՝ առիթ ունեցաւ ծանօթանալ նորա ազնիւ հոգու, նորա ներքին աշխարհի, նորա բարեմասնութիւնների հետ, ծանօթացայ Յովհաննէսի անհուն հալրենասիրութեան, լուսամիտ գաղափարների հետ, որոնց մէջ ես նկատում էի իսկական ազատամտութեան նշաններ. մանաւանդ նա յափըշտակուած սիրում էր հայ եկեղեցին, երազում էր գործել ապագայում նորա օգտին, նուիրելով իրան կուսակրօնութեան. նա սէր էր շնչում, սէր ներշնչում ամենին, նա Լալացիգի և Բերլինի հայ ուսանողների հոգին էր կազմում. տեղական հայ կօլոնիալի միակ ներկայացուցիչ և հայ ուսանողների յատուկ բարեկամ երիտասարդ վաճառական Միհրան Ալլալէմճեանը հրճուանքով էր խօսում ինձ հետ նորա մասին:

Բայց խաչումեանը նշանաւոր չէր նորանով, որ համալսարանի և այն՝ աստուածաբանութեան ուսանող էր. մբթէ քիչ կան աստուածաբանութեան թերուս ուսանողներ, որոնք վերադառնալով արտասահմանից անընդունակ են նոյն իսկ ս. գիրքը կարգին հասկանալ. Խաչումեանը նշանաւոր էր այն մի շարք ընտիր յօդուածներով, որոնք տպուած են «Նոր Դար» լրագրում և արտասահմանի բազմաթիւ թերթերում. նա մինչև վերջին օրերը աշխատակցում էր ամերիկական և անդլիական լրագիրներին: Վերջիններս այնքան հիացած էին Խաչումեանցի գրուածների վերայ, որ ամեն կողմից առաջարկում էին նորան աշխատակցել, որի համար և տալիս էին նորան որոշ չափով վարձատրութիւն. այդ տեսակ քանի մի առաջարկութիւն ստացաւ հանգուցեալը մեր ներկայութեամբ Լալացիգում:

Նա բարոյապէս ամեն կերպ աջակցում էր և «Լումայ»-ին, որին խոստացել էր իւր մշտական աշխատակցութիւնը, «ոչ մի յուսոյ նշով ապագալի նկատմամբ, դրում էր նա ինձ իւր վերջին նամակում, մարդ սիրտունիք բան դրելու: Յամենալն դէպս յոյս ունիմ մինչև մի շաբաթ յօդուածն ուղարկելու: Նորա վերջին նամակը կրում էր իւր վերալ քաղաքալին հիւանդանոցի գրոշմը՝ ‘Städt-Krankenhausse’, յուսահատական բառերը:

Սակայն անգութ մահը, օտարութեան մէջ, հեռու իւր պաշտած հալըենի հողից, որի բարգաւաճման այնքան անձնուրացութեամբ նույիրել էր իրան, հեռու իւր տաղանդի բազմաթիւ յարգողներից, վերջ գրեց նորա վարդափլթիթ կեանքին, առաջ քան թէ նա կարող կը լինէր իւր բաղձանքներին հասնել:

Յաւիտենական հանգիստ գրականութեան ազնիւ մշակի քրտնաշան ոսկըներին:

Գիւտ քահ. Աղանձամց

Կ Բ Թ Ռ Ո Ւ Թ Վ Ի Ւ Ն ¹⁾

Կրթութեան առողջապահական ազդեցութիւնն ընդիան-
րապէս:

Այն էական յառաջադիմութիւնը, որ ձեռք է բեր-
ուել մարդկանց հասարակական կեանքի կապակցուելով,
կախանում է ժողովրդի մտաւոր ուժգին զարգացման մէջ:

1)Այս յօդուածը մի հասուած է գերմաներէն «Առողջապահութեան գրքուկ» (Gesundheitsbüchlein) գիւրամատչելի ձեռնարկից, որ 1895 թուին մշակել և հրատարակել է Գերմանիայի առողջապահութեան բարձրագուն հասաւութիւնը (Kaiserliches Gesundheitsamt) և բնագրից թարգմանուած է մեծարգոյ բժշկապետ պ. Սամսոն Մայսուրեանցի օգնութեամբ: Այս գրքուկի մնացեալ հատուածները կաշխատնք հետզհետէ տալ «Լումայի» միւս գրքերում:

ԽՄՁ.

23